ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Բնության արտաքին ուժերի աշխատանք է Հայաստանի Հանրապետության հնագույն բնակավայրերից Հին Խնձորեսկի տեղանքը: Սյունիքի, իր ձևի մեջ յուրօրինակ այս բնակավայրը տարածվում է արևմուտքից արևելք գրեթե 3 կմ երկարությամբ ձգվող լեռնահովտի աջ և ձախ լանջերին: Լեռները կտրտված են խոր ձորահովիտներով, հողաբրգերով և քարանձավներով: Ձորերը միմյանցից բաժանվում են լեռնաբա-զուկներով, որոնց լանջերին տեղ-տեղ վեր են խոյանում 100 -120 մ բարձրությամբ ժայռեր: Խնձորեսկի բնակիչները դարեր շարունակ հմտորեն օգտագործել են լեռ-նային բարդ տեղանքը, ինչպես բնակության ու աշխատանքի, այնպես էլ ինքնա-պաշտպանության համար: